



ՏԵՂԵԿԱՆՔ  
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ  
ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

# ՏԵՂԵԿԱՆՔ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2025Թ. ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ .....	1
1. ԲՅՈՒՋԵԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ .....	1
2. ԲՅՈՒՋԵԻ ԵՎԱՄՈՒՏՆԵՐԸ .....	3
3. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ .....	7
3.1. Ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման .....	7
3.2. Ծախսերը՝ ըստ գործառնական դասակարգման .....	10
3.3. Ծախսերը՝ ըստ ծրագրերի .....	12
4. ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ .....	14
5. ԱՄՓՈՓՈՒՄ .....	15

## ՆԱԽԱԲԱՆ

Երևանի ավագանու նիստով հաստատվեց Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը, որը, որպես մայրաքաղաքի հիմնական ֆինանսական փաստաթուղթ, բնականաբար, առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ հնարավորություն է տալիս գնահատելու քաղաքային իշխանությունների կառավարման արդյունավետությունն ու առկա խնդիրների լուծման ընթացքը:

«Լույս» հիմնադրամը Երևան քաղաքի բյուջեի կատարման յուրաքանչյուր տարվա հաշվետվության վերաբերյալ պատրաստում է համապատասխան տեղեկանք-վերլուծություն<sup>1</sup>: Նշված տեղեկանքներում նախ տրվում է Երևան քաղաքի հաշվետու տարվա բյուջեի ընդհանուր նկարագիրը: Այնուհետև, առանձին բաժիններով, ներկայացվում են բյուջեի կառուցվածքային բաղադրիչները՝ եկամուտները, ծախսերը (ըստ տնտեսագիտական և գործառնական դասակարգման, ինչպես նաև ըստ ծրագրերի) և բյուջեի պակասուրդը: Տեղեկանքներն ամփոփվում են հաշվետվության վերաբերյալ ուսումնասիրության կարևոր արդյունքների ու եզրահանգումների հակիրճ նկարագրմամբ:


## 1. ԲՅՈՒՋԵԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**2025թ. ևս Երևան քաղաքի բյուջեի եկամուտների հավաքագրումը հիմնականում ապահովվել է մի քանի օրենսդրական փոփոխությունների (հանրության բացասական վերաբերմունքին արժանացած) շնորհիվ (ինչպես 2024-ին էր):** Բյուջեի ընդհանուր եկամուտների փաստացի մեծությունը 2025-ին կազմել է 148.5 մլրդ դրամ, իսկ ծախսերինը՝ 140.8 մլրդ դրամ: **Հաշվետու տարվա ընթացքում, ինչպես նախորդ տարիներին, բյուջեի ծախսերը թերակատարվել են:** Տարեկան ճշտված պլանի<sup>2</sup> համեմատ բյուջեի եկամուտները գերակատարվել են 0.5%-ով, իսկ հաստատված պլանի համեմատ արձանագրվել է եկամուտների 6.8% թերակատարում. բանն այն է, որ բյուջեի եկամուտները ճշտված պլանով զգալիորեն նվազեցվել են՝ 159.4 մլրդ դրամից 147.8 մլրդ դրամ:

<sup>1</sup> 2019-2024 թվականների բյուջեների կատարման հաշվետվությունների վերաբերյալ բոլոր վերլուծությունները հասանելի են «Լույս» հիմնադրամի պաշտոնական կայքում՝ [https://www.luys.am/...](https://www.luys.am/):

<sup>2</sup> Երևանի 2025թ. բյուջեի կատարման հաշվետվության մեջ հիշատակվող ճշտված պլանի հետ համեմատական տվյալները շեղվում են նույն փաթեթում ներառված հավելվածներում ներկայացված ճշտված պլանից: Հաշվետվության տեքստում համեմատությունները կատարված են ճշտված պլանի մեկ այլ տարբերակի հետ, որի մասին ամբողջական տեղեկություն փաթեթում առկա չէ: Սույն տեղեկանքում վերլուծական հաշվարկների համար հիմք է ընդունվել ավագանու որոշման հավելվածներում ներկայացված ճշտված պլանը:

**Գծապատկեր 1. Երևան քաղաքի բյուջեի ցուցանիշները, մլրդ դրամ**



Քաղաքային բյուջեի ծախսերը մի քանի տարի շարունակ թերակատարվում են. ընդհանուր ծախսերը կազմել են ճշտված պլանով նախատեսվածի 89.9%-ը, իսկ հաստատված պլանի ցուցանիշի՝ 88.3%-ը: Ընդ որում, զգալի թերակատարում է առկա ինչպես վարչական, այնպես էլ ֆոնդային բյուջեի գծով:

**Աղյուսակ 1. Երևան քաղաքի բյուջեի ամփոփ ցուցանիշները (մլրդ դրամ) և դրանց կատարողականը, 2025թ.**

	Հաստատված պլան	Ճշտված պլան	Փաստացի	Կատարողականը հաստատված պլանի նկատմամբ, %	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
<b>Եկամուտներ</b>	<b>159.4</b>	<b>147.8</b>	<b>148.5</b>	<b>93.2</b>	<b>100.5</b>
Վարչական բյուջե	158.7	147.5	148.2	93.4	100.5
Ֆոնդային բյուջե	9.8	5.7	0.9	90.4	83.5
<b>Ծախսեր</b>	<b>159.5</b>	<b>156.6</b>	<b>140.8</b>	<b>88.3</b>	<b>89.9</b>
Վարչական բյուջե	158.7	147.7	132.9	83.8	89.9
Ֆոնդային բյուջե	9.9	14.2	8.6	86.9	60.5
<b>Հավելուրդ</b>	<b>-0.1</b>	<b>-8.7</b>	<b>7.7</b>	<b>-</b>	<b>-</b>


Հաշվետու տարում ևս (ինչպես և 2024-ին), տարեկան հաստատված պլանով ծրագրված էր փոքրիկ պակասուրդ, սակայն տարին ավարտվել է քաղաքային բյուջեի էական հավելուրդով՝ 7.7 մլրդ դրամ:

## 2. ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

2025-ին Երևան քաղաքի բյուջեի ընդհանուր եկամուտների փաստացի մեծությունը կազմել է 148.5 մլրդ դրամ, որը նախորդ տարվա ցուցանիշին գերազանցում է 27.2%-ով, սակայն 6.8%-ով պակաս է հաստատված բյուջեի ցուցանիշից: Աճն ապահովվել է «այլ եկամուտների» և «հարկերի և տուրքերի» հաշվին. դրանց նպաստումները ընդհանուր եկամուտների աճին կազմել են համապատասխանաբար՝ 19.2 և 8.8 տոկոսային կետ: **Բյուջեի եկամուտների երրորդ բաղադրիչը՝ «պաշտոնական դրամաշնորհները», նվազել է 6.3%-ով՝ ընդհանուր եկամուտների աճին հակազդելով 0.8 տոկոսային կետով:**

Բյուջեի սեփական եկամուտների փաստացի մեծությունը՝ 96.6 մլրդ դրամ, նույնպես գերազանցում է ճշտված պլանի ցուցանիշին՝ 88.7 մլրդ դրամին: **Բարձր կատարողականը հիմնականում բացատրվում է երկու հանգամանքով. մի կողմից՝ 2024-ի համեմատ 66.9%-ով կամ 9.2 մլրդ դրամով աճել է անշարժ գույքի դիմաց հավաքագրված գույքային հարկերի ընդհանուր ծավալը՝ կապված գույքահարկի հաշվարկման նոր մեթոդաբանության աստիճանական ներդրման հետևանքով գույքահարկի բազայի կտրուկ բարձրացման հետ, մյուս կողմից՝ այլ եկամուտների կազմում 62.1%-ով կամ 15.1 մլրդ դրամով ավելացել են դրանց մեջ մտնող այն եկամտատեսակները, որոնք հանդիսանում են սեփական եկամուտներ (պատվիրակված լիազորությունների իրականացման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ, աղբահանության վճար և այլն):**

**Գծապատկեր 2. Երևան քաղաքի բյուջեի եկամուտների կառուցվածքը, %**



2025-ին բյուջեի եկամուտների կառուցվածքը մեկ տարվա ընթացքում էական փոփոխությունների է ենթարկվել: Մասնավորապես, աճել է այլ եկամուտների տեսակարար կշիռը՝ 47.4%-ից հասնելով 52.3%-ի: Իսկ մյուս երկու եկամտային

բաղադրիչների կշիռները, ընդհակառակը, նվազել են. հարկային եկամուտների և տուրքերի տեսակարար կշիռը 2024-ի ցուցանիշի համեմատ նվազել է 1.6, իսկ պաշտոնական դրամաշնորհներինը՝ 3.3 տոկոսային կետով:

**Աղյուսակ 2. Երևան քաղաքի բյուջեի եկամուտները 2025 թվականին**

Եկամտատեսակները	Տարեկան հաստատված պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստացի	Կատարողականը՝ հաստ. պլանի նկատմ.	Կատարողականը՝ ճշտված պլանի նկատմ.	Աճը՝ 2024թ. նկատմամբ
	մլրդ. դրամ			%		
<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ</b>	<b>159.4</b>	<b>147.8</b>	<b>148.5</b>	<b>93.2</b>	<b>100.5</b>	<b>27.2</b>
<b>Հարկեր և տուրքեր</b>	<b>49.2</b>	<b>50.3</b>	<b>57.1</b>	<b>116.2</b>	<b>113.5</b>	<b>21.9</b>
Գույքային հարկեր անշարժ գույքից	19.6	19.6	23.0	117.6	117.6	66.9
Գույքային հարկեր այլ գույքից	14.0	14.0	14.4	103.1	103.1	12.9
Տեղական տուրքեր	15.0	16.2	18.9	126.1	116.9	-3.2
Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր	0.6	0.6	0.8	129.3	129.3	0.2
<b>Պաշտոնական դրամաշնորհներ, այդ թվում՝</b>	<b>11.1</b>	<b>13.7</b>	<b>13.7</b>	<b>122.9</b>	<b>99.5</b>	<b>-6.3</b>
Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից	0.0	0.0	0.0	-	-	-100.0
Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից	0.4	0.0	0.0	5.5	210.8	-89.0
Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից	10.4	13.4	13.4	129.3	100.0	-0.3
Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից	0.3	0.3	0.2	68.1	70.7	67.4
<b>Այլ եկամուտներ</b>	<b>99.1</b>	<b>83.8</b>	<b>77.7</b>	<b>78.4</b>	<b>92.8</b>	<b>40.6</b>
Շահաբաժիններ	0.2	0.2	0.3	129.9	129.9	30.1
Գույքի վարձակալությունից եկամուտներ	2.3	2.3	2.3	102.0	102.0	23.4
Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից	79.4	54.3	47.2	59.5	87.0	52.5
Վարչական գանձումներ	15.3	23.5	25.2	165.1	107.4	37.3
Մուտքեր փոյժերից, փուզանքներից	1.2	2.6	2.7	233.1	103.3	66.0
Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	0.0	0.0	0.0	27.5	27.5	-92.5
<b>Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>
Այլ եկամուտներ	0.8	0.8	-0.0	-	-	-

Փաստացի հավաքագրված հարկերի և տուրքերի ընդհանուր մեծությունը կազմել է 57.1 մլրդ դրամ, որը նախորդ տարվա ցուցանիշից 21.9%-ով ավելի է՝ գրեթե ամբողջությամբ պայմանավորված անշարժ գույքի գույքային հարկերի 66.9%-ով և փոխադրամիջոցների գույքահարկի 12.9%-ով աճերով: Դրանք հարկերի և տուրքերի ընդհանուր աճին նպաստել են համապատասխանաբար 19.7 և 3.5 տոկոսային կետով: **Հարկերի և տուրքերի աճը հիմնականում պայմանավորված է գույքահարկի բազայի 50%-ով<sup>3</sup> բարձրացմամբ, 2025 թվականի ընթացքում ավարտական ակտ չունեցող բազմաբնակարան և այլ շենքերը որպես մեկ միավոր ավարտված շինություն դիտարկելու հետևանքով հաշվարկված անշարժ գույքի հարկի վճարումներով, տարվա ընթացքում առաջացած նոր գույքային միավորների համար անշարժ գույքի հարկի վճարումներով, ինչպես նաև շինարարության տուրքերի ավելացմամբ՝ պայմանավորված շինարարական աշխատանքների ծավալի ավելացմամբ:**

Հարկերի և տուրքերի մեջ ամենամեծ տեսակարար կշիռը՝ 40.3%, ունեն անշարժ գույքի հարկերը, որոնց ծավալը կազմել է 23.0 մլրդ դրամ: Դրանք կազմում են փաստացի ընդհանուր եկամուտների 14.5%-ը և նախորդ տարվա համեմատ աճել են 9.2 մլրդ դրամով:

Այլ գույքային հարկերը (փոխադրամիջոցների գույքահարկը) 2025-ին հարկերի և տուրքերի կառուցվածքում երկրորդ տեղում են՝ 25.2% տեսակարար կշռով: Դրանց ծավալը կազմել է 14.4 մլրդ դրամ՝ 2024-ի ցուցանիշից 12.9%-ով ավելի՝ **պայմանավորված փոխադրամիջոցների քանակի ավելացմամբ:** Բյուջեի ընդհանուր եկամուտների կազմում այլ գույքային հարկերի գծով մուտքերի տեսակարար կշիռը 9.0% է:

Հարկերի և տուրքերի մեջ 33.1% տեսակարար կշռով երկրորդ տեղում տեղական տուրքերն են: Դրանք ճշտված պլանի համեմատ գերակատարվել են 16.9%-ով, սակայն 3.2%-ով պակաս են 2024-ի փաստացի ցուցանիշից և կազմում են 18.9 մլրդ դրամ: **Տեղական տուրքերի կազմում ամենամեծ տեսակարար կշիռը՝ 82.6%, ունի նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) թույլտվության համար հավաքագրված տուրքը, որը ընդհանուր կազմել է 15.6 մլրդ դրամ:** Այս եկամտատեսակի գծով հավաքագրումը ճշտված պլանի նկատմամբ գերակատարվել է 2.7 մլրդ դրամով:

<sup>3</sup> Հաշվի է առնվել, որ գույքահարկի հաշվարկման նոր համակարգն ուժի մեջ է մտնում աստիճանաբար, և գույքահարկը 2024-ին հաշվարկվել է կադաստրային արժեքի 50%-ից, իսկ 2025-ին՝ արդեն 75%-ից: Հետևաբար 2025-ին գույքահարկի բազայի աճը 2024-ի համեմատ կազմում է՝  $((75-50) / 50) \times 100\% = 50\%$ :

Պաշտոնական դրամաշնորհները կազմել են 13.7 մլրդ դրամ՝ ճշտված պլանի ցուցանիշի 99.5%-ը: Դրանց հիմնական մասը կազմում են կառավարման այլ մակարդակներից (մասնավորապես՝ կառավարությունից) ստացվող ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհները, որոնց ծավալը կազմել է 13.4 մլրդ դրամ: **Պաշտոնական դրամաշնորհների տեսակարար կշիռը բյուջեի ընդհանուր եկամուտների մեջ տարեցտարի շարունակաբար նվազում է. 2023-ին այն նախորդ տարվա համեմատ նվազել է 6.1, 2024-ին՝ 6.9, իսկ 2025-ին՝ ևս 3.3 տոկոսային կետով և կազմել 9.2%:** Նախորդ տարվա համեմատ պաշտոնական դրամաշնորհների ծավալը նվազել է 6.3%-ով:

Բյուջեի ընդհանուր եկամուտների 52.3%-ն ապահովվել է այլ եկամուտների հաշվին: Դրանք 2025-ին կազմել են 77.7 մլրդ դրամ՝ 2024-ի ցուցանիշից 40.6%-ով ավելի, **հիմնականում պայմանավորված Երևան քաղաքի տրանսպորտային բարեփոխումների շրջանակներում միասնական տոմսային համակարգի ներդրմամբ:** Այլ եկամուտները թերակատարվել են ճշտված պլանի նկատմամբ 7.2, իսկ հաստատված պլանի նկատմամբ՝ 21.6%-ով: Բյուջեի կատարման հաշվետվությունում նշված է, որ «ծրագրված և փաստացի ցուցանիշների շեղումները հիմնականում պայմանավորված են Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորությունների շրջանակներում իրականացվող ծրագրերի ամբողջական կամ մասամբ չկատարմամբ»: Այլ եկամուտների 40.6% աճն առավելապես պայմանավորված է երկու եկամտատեսակների խմբերով՝ 29.4 տոկոսային կետով՝ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից եկամուտներով և 12.4 տոկոսային կետով՝ վարչական գանձումներով: Ի դեպ, հիշատակված երկու խմբերից առաջինի մեջ մտնող «պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցները» 2024-ի համեմատ աճել են 23.7%-ով (7.3 մլրդ դրամով), սակայն թերակատարվել են՝ ճշտված պլանի նկատմամբ 15.8%-ով (7.2 մլրդ դրամով), իսկ հաստատված պլանի նկատմամբ՝ 34.1%-ով (19.8 մլրդ դրամով):

Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից ստացվող եկամուտները կազմել են այլ եկամուտների 60.8%-ը (կամ ընդհանուր եկամուտների 31.8%-ը): **Դրանց գծով թերակատարումը զգալի է՝ ճշտված պլանի նկատմամբ՝ 13.0%, իսկ հաստատված պլանի նկատմամբ՝ 40.5%:**

Վարչական գանձումների հիմնական մասը կազմող տեղական վճարների գծով փաստացի եկամուտները 2024-ի համեմատ աճել են 39.1%-ով կամ 7.0 մլրդ դրամով: **Բյուջեի հաշվետվությունում նշված է, որ աճը հիմնականում պայմանավորված է բնակելի նշանակության շինությունների համար**

աղբահանության վճարների հաշվարկման մեթոդաբանության փոփոխմամբ, ինչպես նաև Երևան քաղաքում շինարարական աշխատանքների ծավալի ավելացմամբ:

Այլ եկամուտների կազմում շեշտակի՝ 71.6% աճ է արձանագրվել նաև «վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտների» գծով՝ դրանք 2025-ին կազմել են 2.6 մլրդ դրամ: Ի դեպ, հաշվետու տարում հավաքագրված տուգանքները, կազմելով բավական մեծ գումար, միևնույն է, պակաս են եղել պարզևատրումներին, դրամական խրախուսումներին և հատուկ վճարներին ուղղված ծախսերից:

Իսկ այլ եկամուտների մեջ մտնող մեկ այլ եկամտատեսակ՝ ավտոկայանատեղիում կայանման համար գանձված վճարները, 2024-ի համեմատ նվազել է 8.4%-ով: Ի դեպ, թե՛ հաստատված, թե՛ ճշտված պլանով ծրագրված է, որ այս ցուցանիշը 57.4%-ով գերազանցելու է 2024-ի համապատասխան պլանային մեծությանը: **Հիշեցնենք, որ 2024-ի հունվարի 1-ից ավտոկայանման վճարները 2-ից 13.3 անգամ աճել են, մինչդեռ 2025-ի փաստացի հավաքագրումները 2023-ի ցուցանիշին գերազանցում են ընդամենը 62.7%-ով<sup>4</sup>:** Դժվար է հավատալ, որ ավտոկայանման վճարների բարձրացման դիմաց համեմատաբար «համեստ» աճի միակ պատճառը փողոցային ավտոկայանատեղերի բեռնաթափումն է:

### 3. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

Երևան քաղաքի 2025թ. բյուջեի փաստացի ընդհանուր ծախսերը կազմել են 140.8 մլրդ դրամ: **Դրանք 2024-ի համեմատ աճել են 23.9%-ով, սակայն 10.1%-ով պակաս են ճշտված պլանի և 11.7%-ով՝ հաստատված բյուջեի ցուցանիշից:**

Ծախսերի վերաբերյալ վերլուծությունն առավել նպատակահարմար է իրականացնել ըստ դրանց տարբեր դասակարգումների:

#### 3.1. Ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման


Ըստ տնտեսագիտական դասակարգման բյուջեի ծախսերը խմբավորվում են *ընթացիկ ծախսեր, ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր և ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր* խմբերում:

**Ընթացիկ ծախսերի փաստացի մեծությունը 2025թ. կազմել է 132.2 մլրդ դրամ: Նույնիսկ այն հանգամանքը, որ 2025-ի բյուջեով պլանավորված**

<sup>4</sup> 2025-ի ցուցանիշը՝ 2,103,241.2 հազար դրամ, 2023-ի ցուցանիշը՝ 1,292,351.3 հազար դրամ:  $U_{62.7} = 100 \times (2,103,241.2 - 1,292,351.3) / 1,292,351.3 \approx 62.7$ :

ցուցանիշը՝ 149.6 մլրդ դրամ, ճշտված պլանով նվազեցվել է մինչև 142.3 մլրդ դրամ, միևնույն է, թույլ չի տվել խուսափել թերակատարումից. ընթացիկ ծախսերը թերակատարվել են՝ ճշտված պլանի համեմատ 7.1%-ով, իսկ հաստատված պլանի նկատմամբ՝ 11.6%-ով:

**Գծապատկեր 3. Երևան քաղաքի բյուջեի ծախսերի կառուցվածքը՝ տնտեսագիտական դասակարգմամբ, մլրդ դրամ, 2025թ.**



Ընթացիկ ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել են 43.8%-ով կամ 40.2 մլրդ դրամով: Ընթացիկ ծախսերի ավելացմանն ամենամեծ նպաստումը՝ 31.3 տոկոսային կետ, ունեցել է սուբսիդիաների (հիմնականում պետական (համայնքային) ոչ ֆինանսական կազմակերպություններին տրվող) 57.0%-ով կամ 28.8 մլրդ դրամով աճը: Էական են նաև «այլ ծախսերի» և «սոցիալական նպաստների և կենսաթոշակների» նպաստումները՝ համապատասխանաբար 7.1 և 4.7 տոկոսային կետ: Աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսերն աճել են 11.6%-ով: Ընդ որում, այս ծախսերի մեջ հատկապես ավելացել են պարզևատրումների, դրամական խրախուսումների և հատուկ վճարների նպատակով կատարված ծախսերը. դրանք շարունակել են շոշափելիորեն աճել՝ 2024-ի համեմատ 55.2%-ով կամ 984.1 մլն դրամով, կազմելով 2.8 մլրդ դրամ: Ընդ որում, դրանց փաստացի մեծությունը 3.4 անգամ ավելի է, քան պլանավորված էր հաստատված բյուջեով և գրեթե հավասար է աշխատողների աշխատավարձերի և հավելավճարների համար ծախսված գումարի մեկ քառորդին: Այսինքն՝ կարելի է ասել, որ, ի լրումն աշխատավարձի, տարվա կտրվածքով միջին հաշվով վճարվել է նաև մոտավորապես երեք ամսվա աշխատավարձին հավասար պարզևավճար: Ի դեպ, վերջին երեք տարիների ընթացքում պարզևատրումների, դրամական խրախուսումների և հատուկ վճարների նպատակով կատարված ծախսերն ավելի քան տասնապատկվել են:

Ի տարբերություն ընթացիկ ծախսերի՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը (կապիտալ ծախսերը), ընդհակառակը, նախորդ տարվա համեմատ

կտրուկ՝ 41.9%-ով կամ 10.9 մլրդ դրամով, նվազել են: Ճշտված պլանի նկատմամբ դրանք թերակատարվել են 32.3%-ով: Ի դեպ, տոկոսային արտահայտությամբ կապիտալ ծախսերի գծով թերակատարումն ավելի քան 4.5 անգամ մեծ է, քան ընթացիկ ծախսերի թերակատարումը:

Բյուջեի ընդհանուր ծախսերում կապիտալ ծախսերի տեսակարար կշիռը ևս էապես նվազել է. 2025-ին այն կազմել է 10.7%՝ նախորդ տարվա ցուցանիշից ավելի քան կրկնակի՝ 12.1 տոկոսային կետով պակաս: Ընթացիկ ծախսերի տեսակարար կշիռը, ընդհակառակը, 2024-ի համեմատ աճել է 13.0 տոկոսային կետով և կազմել 93.9%:

**Աղյուսակ 3. Երևան քաղաքի բյուջեի ծախսերը՝ տնտեսագիտական դասակարգմամբ (մլրդ դրամ) և դրանց կատարողականը, 2025թ.**

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածները	Հաստատված պլան	Ճշտված պլան	Փաստ.	Կատարողականը՝ հաստատ. պլանի նկատմ.	Կատարողականը՝ ճշտված պլանի նկատմ.	Աճը՝ 2024թ. նկատմ.
				մլրդ դրամ		
<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ</b>	<b>159.5</b>	<b>156.6</b>	<b>140.8</b>	<b>88.3</b>	<b>89.9</b>	<b>23.9</b>
<b>Ընթացիկ ծախսեր</b>	<b>149.6</b>	<b>142.3</b>	<b>132.2</b>	<b>88.4</b>	<b>92.9</b>	<b>43.8</b>
Աշխատանքի վարձատրություն	13.2	15.1	15.0	113.6	99.5	11.6
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	15.1	14.3	12.7	83.7	88.5	4.3
Տոկոսավճարներ	0.1	0.1	0.1	83.3	100.0	33.8
Սուբսիդիաներ	76.8	79.3	79.2	103.1	99.9	57.0
Դրամաշնորհներ	0.5	1.3	1.3	241.7	99.1	-52.5
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	7.5	7.1	6.9	92.8	97.6	167.7
Այլ ծախսեր	36.3	25.2	17.0	46.8	67.6	62.0
<b>Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր</b>	<b>17.9</b>	<b>22.2</b>	<b>15.1</b>	<b>84.3</b>	<b>67.7</b>	<b>-41.9</b>
Հիմնական միջոցներ	17.5	22.2	15.1	86.3	67.7	-41.9
Պաշարներ	0.0	0.0	0.0	-	-	-
<b>Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր</b>	<b>-8.0</b>	<b>-8.0</b>	<b>-6.4</b>	<b>80.6</b>	<b>80.6</b>	<b>-53.4</b>

Աղյուսակ 3-ից երևում է, որ տնտեսագիտական դասակարգմամբ ճշտված պլանի նկատմամբ չեն թերակատարվել միայն մեկ հոդվածի՝ «Տոկոսավճարների» գծով ծախսերը:


### 3.2. Ծախսերը՝ ըստ գործառնական դասակարգման

Ըստ գործառնական դասակարգման ծախսերը խմբավորվել են ուղղություններով.

- **Ընդհանուր նշանակության պետական ծառայություններ**՝ ընդգրկում են «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» և «Պաշտպանություն» հոդվածները,
- **Տնտեսական ծառայություններ**՝ ներառում են «Տնտեսական հարաբերություններ» և «Շրջակա միջավայրի պաշտպանություն» հոդվածները,
- **Սոցիալական ծառայություններ**՝ ներառում են «Առողջապահություն», «Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն», «Հանգիստ, մշակույթ և կրոն» և «Սոցիալական պաշտպանություն» հոդվածները,
- «Կրթություն»,
- «Պահուստային ֆոնդ»:

2025 թվականին Երևան քաղաքի բյուջեի ծախսերի մեջ առավել մեծ տեսակարար կշիռներ են ունեցել **տնտեսական ծառայություններին** և **կրթության** ոլորտին ուղղվող ծախսերը՝ համապատասխանաբար 42.0% և 33.2%: Դրանց ծավալները կազմել են համապատասխանաբար 59.2 և 46.8 մլրդ դրամ: Հաջորդ մեծ տեսակարար կշիռը՝ 13.2%, ունեցել են **սոցիալական ծառայություններին** ուղղվող ծախսերը, որոնց ծավալը կազմել է 18.6 մլրդ դրամ: **Ընդհանուր նշանակության պետական ծառայությունների** համար կատարված ծախսերը 2025-ին կազմել են 14.8 մլրդ դրամ՝ ընդհանուր ծախսերի 10.5%-ը: Ծախսերի 1.0%-ը՝ 1.4 մլրդ դրամը, ուղղվել է **պահուստային ֆոնդին**:

**Գծապատկեր 4. Երևան քաղաքի բյուջեի ծախսերի կառուցվածքը՝ գործառնական դասակարգմամբ, մլրդ դրամ, 2025թ.**



**Ծշտված պլանի նկատմամբ բյուջեի ծախսերի թերակատարումը վերաբերում է գործառնական դասակարգման բոլոր ծախսային**

**ուղղություններին (Աղյուսակ 4):** Ծախսերի 10.1% թերակատարումն առավելապես պայմանավորված է տնտեսական և սոցիալական ծառայություններին ուղղվող ծախսերի (համապատասխանաբար 5.4 և 2.7 տոկոսային կետ նպաստումներով) ցածր կատարողականով: Նշված ծախսային ուղղությունների գծով թերակատարումը տարեկան ճշտված պլանի նկատմամբ կազմել է համապատասխանաբար 12.0% և 18.2%:

**Աղյուսակ 4. Երևան քաղաքի բյուջեի ծախսերը՝ գործառնական դասակարգմամբ, 2025թ.**

Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Հաստատված պլան	Ճշտված պլան	Փաստացի	Կատարողականը՝ պլանի նկ.	Կատարողականը՝ ճշտված պլանի նկ.	Աճը՝ 2024թ. նկատմամբ
	մլրդ դրամ			%		
<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ</b>	<b>159.5</b>	<b>156.6</b>	<b>140.8</b>	<b>88.3</b>	<b>89.9</b>	<b>23.9</b>
<b>Ընդհանուր նշանակության պետական ծառայություններ</b>	<b>14.7</b>	<b>16.4</b>	<b>14.8</b>	<b>100.8</b>	<b>90.2</b>	<b>15.1</b>
<i>Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ</i>	<i>14.6</i>	<i>16.3</i>	<i>14.8</i>	<i>101.1</i>	<i>90.4</i>	<i>15.8</i>
<i>Պաշտպանություն</i>	<i>0.1</i>	<i>0.1</i>	<i>0.0</i>	<i>48.4</i>	<i>55.0</i>	<i>-61.5</i>
<b>Տնտեսական ծառայություններ</b>	<b>71.8</b>	<b>67.2</b>	<b>59.2</b>	<b>82.4</b>	<b>88.0</b>	<b>43.7</b>
<i>Տնտեսական հարաբերություններ</i>	<i>59.3</i>	<i>53.0</i>	<i>45.4</i>	<i>76.6</i>	<i>85.6</i>	<i>68.8</i>
<i>Շրջակա միջավայրի պաշտպանություն</i>	<i>12.5</i>	<i>14.2</i>	<i>13.8</i>	<i>109.8</i>	<i>97.1</i>	<i>-3.6</i>
<b>Սոցիալական ծառայություններ</b>	<b>24.0</b>	<b>22.8</b>	<b>18.6</b>	<b>77.5</b>	<b>81.8</b>	<b>-4.0</b>
<i>Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն</i>	<i>12.2</i>	<i>10.3</i>	<i>7.7</i>	<i>63.4</i>	<i>75.6</i>	<i>1.1</i>
<i>Առողջապահություն</i>	<i>0.4</i>	<i>0.4</i>	<i>0.3</i>	<i>85.5</i>	<i>70.6</i>	<i>-19.2</i>
<i>Հանգիստ, մշակույթ և կրոն</i>	<i>9.4</i>	<i>9.8</i>	<i>9.1</i>	<i>96.9</i>	<i>92.9</i>	<i>-4.2</i>
<i>Սոցիալական պաշտպանություն</i>	<i>2.0</i>	<i>2.3</i>	<i>1.5</i>	<i>72.2</i>	<i>64.8</i>	<i>-20.3</i>
<b>Կրթություն</b>	<b>48.7</b>	<b>48.1</b>	<b>46.8</b>	<b>96.1</b>	<b>97.4</b>	<b>16.6</b>
<b>Հիմնական բաժիններին չհասվող պահուստային ֆոնդեր</b>	<b>0.2</b>	<b>2.1</b>	<b>1.4</b>	<b>687.7</b>	<b>66.0</b>	<b>1641.3</b>

Նախորդ տարվա համեմատ ընդհանուր ծախսերի 23.9% աճին ամենամեծ նպաստումն ունեցել են տնտեսական ծառայություններին ուղղվող ծախսերը, որոնք ավելացել են 43.7%-ով՝ ընդհանուր ծախսերի աճին նպաստելով 15.8 տոկոսային

կետով: Ընդհանուր ծախսերի աճին 5.9 տոկոսային կետ նպաստմամբ հաջորդում է կրթության ուղղվող ծախսերի 16.6% աճը: Դրական է եղել նաև ընդհանուր նշանակության պետական ծառայություններին և պահուստային ֆոնդերին ուղղվող ծախսերի աճի ազդեցությունը: Դրանք աճել են համապատասխանաբար 15.1%-ով և 17.4 անգամ՝ ընդհանուր ծախսերի աճին նպաստելով 1.7 և 1.1 տոկոսային կետով: Աճին 0.7 տոկոսային կետով հակազդել է սոցիալական ծառայություններին ուղղվող ծախսերի 4.0%-ով նվազումը:

### 3.3. Ծախսերը՝ ըստ ծրագրերի

Ըստ ծրագրերի ծախսերի կատարման վերլուծությունը ցույց է տալիս, որ, ընդհանուր ծախսերի գծով արձանագրված ցածր կատարողականի ֆոնին կենսական կարևորություն ունեցող մի շարք ծրագրերի գծով պատկերն ավելի անմխիթար է: Աղյուսակ 5-ում ներկայացված են այդպիսի ծրագրերից մի քանիսը:

**Աղյուսակ 5. Երևան քաղաքի 2025թ. բյուջեի մի շարք կարևոր ծրագրերի կատարողական ցուցանիշները, մլն դրամ**

Ծրագիրը	Հաստատված պլան	Ճշտված պլան	Փաստացի	Կատարողականը հաստ. պլանի նկատմ., %	Կատարողականը ճշտված պլանի նկատմ., %
Նախագծային աշխատանքներ	1,188.9	1,266.0	519.7	43.7	41.1
Երևան քաղաքի գլխավոր հատակագծի իրականացման վերլուծություն	250.0	250.8	50.0	20.0	19.9
Կամրջային կառուցվածքների վերականգնում և պահպանում	295.0	173.0	104.6	35.5	60.5
Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում	1,854.1	1,580.0	924.4	49.9	58.5
Տրանսպորտային համակարգի արդիականացում	2,098.0	2,270.5	628.1	29.9	27.7
Երևանի մետրոպոլիտենի ենթակառուցվածքների կառուցում	9,640.0	1,361.3	765.1	7.9	56.2
Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի էներգաարդյունավետության ծրագիր», Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդի աջակցությամբ իրականացվող Երևանի էներգաարդյունավետության դրամաշնորհային ծրագիր և Երևանի էներգաարդյունավետության ծրագրի համաֆինանսավորում ծրագրեր	2,124.8*)= 1,091.2+ 433.6+ 600.0	1,186.1	847.2	39.9	71.4
Շրջակա միջավայրի պաշտպանության ենթակառուցվածքների զարգացում	179.3	243.7	0.0	0.0	0.0
Թատրոնների հիմնանորոգում	500.0	428.4	23.7	4.7	5.5

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության դրամաշնորհային ծրագիր» (պատվիրակված լիազորություններ)	1,105.9	1,073.2	48.2	4.4	4.5
Ակադեմիական քաղաք	-	12,000.0	0.0	-	0.0
Պետական աջակցությամբ իրականացվող նախադպրոցական ուսումնական հաստատությունների կառուցում և հիմնանորոգում (պատվիրակված լիազորություններ)	3000.0	756.3	663.5	22.1	87.7

\*) Հաստատված բյուջեով այս երեք ծրագրերից յուրաքանչյուրը ներկայացված է առանձին տողով:

Աղյուսակից երևում է, որ ծրագրերից շատերի գծով հաստատված բյուջեով նախատեսված ծախսերի նույնիսկ կեսը չի կատարվել: Այդպիսի ծրագրերից են՝ «Նախագծային աշխատանքների իրականացումը», «Երևան քաղաքի գլխավոր հատակագծի իրականացման վերլուծությունը», «Կամրջային կառուցվածքների վերականգնում և պահպանումը», «Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգումը», «Տրանսպորտային համակարգի արդիականացումը», «Շրջակա միջավայրի պաշտպանության ենթակառուցվածքների զարգացումը», «Թատրոնների հիմնանորոգումը», Երևանի քաղաքային լուսավորության ծրագիրը, Երևանի էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված երեք ծրագրերը և այլն:

Խիստ ցածր կատարողական ունեցող ծրագրերից արժե առանձին հիշատակել հետևյալ երեքը.

- **«Երևանի մետրոպոլիտենի ենթակառուցվածքների կառուցում».** Այս ծրագրի շրջանակներում, «Աջափնյակ» կայարանի կառուցման համար, հաստատված բյուջեով հատկացվել է 9.6 մլրդ դրամ, որը, տարվա ընթացքում, ճշտված պլանով ավելի քան 7 անգամ նվազեցվել է՝ մինչև 1.4 մլրդ դրամ, իսկ փաստացի կատարված ծախսերը չեն հասնում նույնիսկ 0.8 մլրդ դրամի՝ այն էլ դրանք վերաբերում են միայն նախագծանախահաշվային փաստաթղթերի վճարմանը: Հիշեցնենք, որ նախագծանախահաշվային փաստաթղթերի դիմաց վճարմանը վերաբերող վերոհիշյալ 0.8 մլրդ դրամի ծախսը նախատեսված էր դեռևս 2024-ի բյուջեով, սակայն 2024-ին այս ծրագրի մասով ընդհանրապես ծախս չի կատարվել:
- **«Ակադեմիական քաղաք».** Ծրագրի շրջանակներում ճշտված պլանով նախատեսվել էր ընդամենը 12.0 մլն դրամի ծախս, իսկ փաստացի, նույնիսկ այս փոքրիկ գումարը չի ծախսվել: Ի դեպ, նախորդ տարիներին նման ծախս ընդհանրապես նախատեսված չի եղել:

- **«Պետական աջակցությամբ իրականացվող նախադպրոցական ուսումնական հաստատությունների կառուցում և հիմնանորոգում (պատվիրակված լիազորություններ)».** Ծրագրի իրականացման ծախսերի համար հաստատված պլանով նախատեսված 3.0 մլրդ դրամը ճշտված պլանով քառակի նվազեցվել է, սակայն նույնիսկ այդ նվազեցված պլանն է թերակատարվել՝ 12.3%-ով: Մինչդեռ, ինչպես հայտնի է, 300 դպրոցների և 500 մանկապարտեզների կառուցման և հիմնանորոգման թիրախը գործող կառավարության գործունեության ծրագրով սահմանված կարևորագույն առաջնահերթություններից մեկն է:


#### 4. ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ

2025-ին Երևան քաղաքի բյուջեն փաստացի կատարվել է հավելուրդով. **հավելուրդը կազմել է 7.7 մլրդ դրամ՝ ճշտված պլանով նախատեսված 8.7 մլրդ դրամ պակասուրդի դիմաց** (2024-ին հավելուրդը 3.0 մլրդ դրամ էր՝ ճշտված պլանի 7.1 մլրդ պակասուրդի դիմաց): **Ճշտված պլանով բյուջեի դեֆիցիտը կտրուկ ավելացվել է՝ գրեթե 100-պատիկ, սակայն փաստացի արձանագրվել է հավելուրդ՝ մոտավորապես ճշտված պլանով նախատեսվող պակասուրդի չափ:**

Բյուջեն հավելուրդ է ունեցել բացառապես ի հաշիվ այն փաստի, որ վարչական բյուջեն կատարվել է 15.4 մլրդ դրամ հավելուրդով, իսկ ֆոնդային բյուջեն կատարվել է 7.7 մլրդ դրամ պակասուրդով:

Բյուջեի հավելուրդի զգալի մասը՝ 2.3 մլրդ դրամը, տեղաբաշխվել է ներքին ֆինանսական ակտիվներում՝ մի շարք կազմակերպությունների բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության ձեռքբերման ուղղությամբ:

**Գծապատկեր 5. Երևան քաղաքի բյուջեի հավելուրդը (պակասուրդը), մլրդ դրամ, 2025թ.**



## 5. ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով արձանագրենք.

- Բյուջեի ընդհանուր եկամուտների փաստացի մեծությունը՝ 148.5 մլրդ դրամ, 27.2%-ով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշին, սակայն 6.8%-ով պակաս է հաստատված բյուջեով պլանավորված ցուցանիշից: Աճն ապահովվել է «հարկերի և տուրքերի» և «այլ եկամուտների» հաշվին: Երևան քաղաքի բյուջեի եկամուտների հավաքագրմանը զգալիորեն նպաստել են մի քանի օրենսդրական՝ հանրությանը ոչ հաճո փոփոխություններ: Մասնավորապես, հարկերի և տուրքերի աճը հիմնականում պայմանավորված է գույքահարկի բազայի նախորդ տարվա համեմատ 50%-ով բարձրացմամբ, 2025 թվականի ընթացքում ավարտական ակտ չունեցող բազմաբնակարան և այլ շենքերը որպես մեկ միավոր ավարտված շինություն դիտարկելու հետևանքով հաշվարկված անշարժ գույքի հարկի վճարումներով, տարվա ընթացքում առաջացած նոր գույքային միավորների համար անշարժ գույքի հարկի վճարումներով, ինչպես նաև շինարարության տուրքերի ավելացմամբ՝ պայմանավորված շինարարական աշխատանքների ծավալի ավելացմամբ: Այլ գույքային հարկերի ավելացումը պայմանավորված է փոխադրամիջոցների քանակի ավելացմամբ: Իսկ այլ եկամուտներում վարչական գանձումների հիմնական մասը կազմող տեղական վճարների գծով փաստացի եկամուտների աճը հիմնականում ապահովվել է ի հաշիվ բնակելի նշանակության շինությունների համար աղբահանության վճարների հաշվարկման մեթոդաբանության փոփոխման:

Ավտոկայանատեղիում կայանման համար գանձված վճարները, ընդհակառակը, 2024-ի համեմատ նվազել են 8.4%-ով: Չնայած 2024-ի հունվարի 1-ից ավտոկայանման վճարները 2-ից 13.3 անգամ աճել են, դրանց դիմաց 2025-ի փաստացի հավաքագրումները 2023-ի ցուցանիշից ընդամենը 62.7%-ով են ավելի: Նկատի ունենալով, որ հիշյալ ժամանակահատվածում փողոցային ավտոկայանատեղերի շոշափելի բեռնաթափում չի արձանագրվել, դժվար է հավատալ, որ ավտոկայանման վճարների հավաքագրման այդպիսի համեմատաբար «համեստ» աճի հիմնական պատճառը կայանվող ավտոմեքենաների թվի կրճատումն է:

- Երևան քաղաքի 2025թ. բյուջեի ծախսերը՝ 140.8 մլրդ դրամ, թերակատարվել են ինչպես հաստատված, այնպես էլ ճշտված պլանի նկատմամբ: Թերակատարումը վերաբերում է թե՛ ընթացիկ և թե՛ կապիտալ ծախսերին: Տոկոսային արտահայտությամբ կապիտալ

Ծախսերի գծով թերակատարումն ավելի քան 4.5 անգամ գերազանցում է ընթացիկ ծախսերի թերակատարմանը:

Ծախսերի կազմում առանձնակի ուշադրություն է գրավում պարզևատրումների, դրամական խրախուսումների և հատուկ վճարների նպատակով կատարված ծախսերը, որոնք վերջին երեք տարիների ընթացքում ավելի քան տասնապատկվել են և 2025-ին կազմել 2.8 մլրդ դրամ: Ընդ որում, դրանց փաստացի մեծությունը հաշվետու տարում 3.4 անգամ գերազանցել է հաստատված բյուջեով պլանավորված ցուցանիշին:

Գործառնական դասակարգմամբ բոլոր ծախսային ուղղությունների գծով առկա է ճշտված պլանի նկատմամբ թերակատարում: Արձանագրված զգալի թերակատարումները ևս մեկ անգամ ապացուցում են, որ բյուջետային պլանավորումը շարունակում է մնալ քաղաքային իշխանությունների ամենաթույլ կողմերից մեկը:

- Կենսական կարևորություն ունեցող ծրագրերից շատերի գծով հաստատված՝ բյուջեով նախատեսված ծախսերի նույնիսկ կեսը չի կատարվել: Այդպիսի ծրագրերից կարելի է առանձնացնել «Կամրջային կառուցվածքների վերականգնում և պահպանումը», «Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգումը», «Տրանսպորտային համակարգի արդիականացումը», «Երևանի քաղաքային լուսավորության ծրագիրը», Երևանի էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված երեք ծրագրերը և այլն: Խիստ մտահոգիչ է պատկերը հանրային մեծ հնչեղություն ունեցող որոշ ծրագրերի գծով: Հատկանշական է, որ.
  - «Երևանի մեքրոպոլիտենի ենթակառուցվածքների կառուցում» ծրագրի շրջանակներում «Աջափնյակ» կայարանի կառուցման համար 2025-ի բյուջեով հատկացված 9.6 մլրդ դրամը ճշտված պլանով ավելի քան 7 անգամ նվազեցվել է, սակայն, նույնիսկ այդ պարագայում, կատարողականը կազմել է ընդամենը 56.2%: Ընդ որում, փաստացի կատարված 0.8 մլրդ դրամի ծախսերն ամբողջությամբ վերաբերում են միայն նախագծանախահաշվային փաստաթղթերի դիմաց վճարմանը, որը դեռևս 2024-ի բյուջեով էր նախատեսված:
  - Չնայած «Պեդական աջակցությամբ իրականացվող նախադպրոցական ուսումնական հասարակությունների կառուցում և հիմնանորոգում (պարվիրակված լիազորություններ)» ծրագրի իրականացման ծախսերի համար հաստատված պլանով նախատեսված 3.0 մլրդ դրամը ճշտված պլանով քառակի նվազեցվել է, այնուամենայնիվ, նույնիսկ այդ նվազեցված պլանը թերակատարվել է՝ այն պարագայում, երբ գործող կառավարության գործունեության

ծրագրի կարևորագույն թիրախներից մեկը 300 դպրոցների և 500 մանկապարտեզների կառուցումն ու հիմնանորոգումն է:

- 2025-ին Երևան քաղաքի բյուջեն փաստացի հավելուրդ է ունեցել՝ 7.7 մլրդ դրամ՝ ճշտված պլանով նախատեսված 8.7 մլրդ դրամ պակասուրդի դիմաց: Ընդ որում, բյուջեի պակասուրդը հաստատված պլանով ծրագրված մեծության համեմատ ճշտված պլանով 100-պատիկ ավելացվել է, սակայն պակասուրդի փոխարեն փաստացի արձանագրվել է դրան մոտավորապես համադրելի հավելուրդ:

Թեև հաշվետվության սկզբնամասում փորձ է արված բյուջեի ցածր կատարողականին տալ հնարավորինս նպաստավոր բացատրություն՝ «նախատեսված և փաստացի ծախսված գումարների շեղումները հիմնականում պայմանավորված են գնումների գործընթացում առաջացած խնայողություններով և պայմանագրային պարտավորությունների անցումներով», սակայն նույն հաշվետվության տեքստում, հաջորդիվ նշված է, որ «**ծրագրված և փաստացի ցուցանիշների շեղումները հիմնականում պայմանավորված են Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորությունների շրջանակներում իրականացվող ծրագրերի ամբողջական կամ մասամբ չկատարմամբ**»: Վերջինս խոսում է քաղաքային իշխանության կառավարման ոչ բավարար մակարդակի մասին:

---

**«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:**

**Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան *ակտիվ հղման* տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:**